# ՀԱՄԱՌՈՒՍԱՍՏԱՆՅԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԿՐԹԱԿԱՆ-ՈՐԱԿԱԿԱՆ ԱՃԸ (XIX դ. երկրորդ կես—XX դ. սկիզբ)

Ս. Ս. ՀԱԿՈԲՅԱՆ

*Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգը, լինելով Ռուսաստանի պրոլետարիատի անբաժանելի մասը, իր ձևավորման առանձնահատկություններով հանդերձ, չէր կարող իր վրա չկրել կուլտուրական-որակական աճի այն հիմնական գծերը, որոնք հատուկ էին երկրի պրոլետարիատին ամբողջովին վերցրած։*

*Թեև XIX գ. II կեսին կրթության զարգացումը տեղի էր ունենում համեմատաբար նպաստավոր պայմաններում (ճորտատիրական իրավունքի վերացման, երկրի՝ կապիտալիզմի ժամանակաշրջանը թևակոխելու, լուսավորության և գիտության վրա հեղափոխական շարժման գործած բարերար ազդեցության առումով), սակայն, Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ, ցարական Ռուսաստանում «ժողովրդական մասսաները կողոպտված էին կրթության, գիտության և լուսավորության իմաստով»[1]։ 1897 թ. մարդահամարի տվյալներով երկրում գրագետների թիվը կազմում էր 21,1% (տղամարդիկ՝ 29,3, կանայք՝ 13,1)[2], իսկ հանած մինչև 9 տարեկան նախադպրոցական հասակի երեխաները՝ ընդամենը 27%[3]։ Բանվորների և գյուղացիների երեխաները կրթություն ստանում էին գլխավորապես ծխական դպրոցներում, մեկդասյա և երկդասյա տարրական ուսումնարաններում։ 1898 թ. Ռուսաստանում դպրոցահասակ (8—11 տարեկան) երեխաների 64,5%-ը չէր սովորում[4]։*

*1901 թ. հունվարին բոլոր տեսակի 84544 տարրական ուսումնարաններում սովորում էին 4580827 աշակերտներ։ 1573 շնչին ընկնում էր մեկ տարրական դպրոց, սովորողները կազմում էին բնակչության 3/4%-ը[5]։ Անշուշտ, դա իր կնիքն էր դնում պրոլետարիատի վրա, քանի որ մանկահասակ երեխաները և մինչև 16 տարեկան դեռահասները, ըստ 1897 թ. մարդահամարի, կազմում էին բանվոր դասակարգի 13,2%-ը և գյուղատնտեսական բանվորների ավելի քան կես միլիոնանոց չոկատը։ Չնայած ստեղծված դժվարություններին, 1897 թ. մարդահամարի տվյալներով կարդալ իմացող բանվորները կազմում էին 51,9%, որը 2,5 անգամ գերազանցում էր երկրի բակչության գրագիտությանը[6]։ Ընդ որում գրագետ էր տղամարդ բանվորների 59,9, իսկ բանվորուհիների՝ 34,9%-ը[7]։ Փաստորեն աշխատավորության շրջանում գրագիտության ամենաբարձր մակարդակը բանվորներինն էր, այն դեպքում, երբ Ռուսաստանում գոյություն չուներ արդյունաբերական կարիքների համար որակյալ կադրերի պատրաստման պետական համակարգ։ Այսպիսով, «ժողովրդի խավարեցման» քաղաքականությունը չկարողացավ դադարեցնել աշխատավորության կապը կրթության հետ։ Խոշոր արդյունաբերությունը, համախմբելով բանվորներին, ձևավորում էր նրանց հոգևոր պահանջմունքները։ Պրոլետարիատը ձևավորման զուգընթաց բարձրացնում էր իր գրագիտության մակարդակը և կուլտուրան։*

*Կայսրությունում բանվորների գրագիտության աստիճանը միանման չէր։ Եվրոպական Ռուսաստանի ֆաբրիկագործարանային արդյունաբերության մեջ բարձր գրագիտություն ունեին*

---

1 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 23, էջ 153։

2 Նույն տեղում, էջ 160։

3 Центральный государственный исторический архив СССР (այսուհետև՝ ЦГИА СССР), ф. 32, оп. 1, д. 1126, с. 6.

4 А. Г. Рашин, Население России за 100 лет, М., 1956, с. 314.

5 Центральный государственный архив Октябрьской революции СССР (այսուհետև՝ ЦГАОР СССР), ф. 543, оп. 1, г. 1863—1916, д. 510, с. 12.

6 Рабочий класс России от зарождения до начала XX в., М., 1983, с. 208.

7 Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи 1897 г. (այսուհետև՝ Численность и состав рабочих...), т. 1. СПб., 1906. с. XIV.

դործիքագործ-փականագործները, պոլիգրաֆիստները (մինչև 83%), մետաղագործները (66%), քիմիական և սննդարդյունաբերության բանվորները (մոտ 50%), տեքստիլագործները (49%)[8]: Ֆաբրիկագործարանային բանվոր երիտասարդությունը (13—19 տարեկան) ևս աչքի էր ընկնում գրագիտության բարձր տոկոսով՝ 63—70, այն դեպքում, երբ ընդհանուր բնակչության կազմում այդ տարիքի գրագետները հաշվվում էին միայն 1/3-ը[9]:

Ընդհանուր առմամբ կրթական բարձր աստիճանով աչքի էին ընկնում Պետերբուրգի ու Մոսկվայի, Մերձբալթիկայի բանվորները[10]: Ցածր գրագիտություն ունեին խոշոր քաղաքներից և արդյունաբերական շրջաններից հեռու գտնվող, որակավորում չունեցող բանվորները (խճուղային տրանսպորտինը՝ 35%, սևագործները՝ 20%, գյուղատնտեսական բանվորները՝ 26,3% և այլն)[11]:

Ռուսաստանում գրագիտության ցածր մակարդակը, ինքնին, բացասաբար էր ազդում ծայրագավառների ազգաբնակչության վրա: 1897 թ. տվյալներով Ռուսաստանում գրագետների թիվը, ինչպես ասվեց, կազմել է 21,1%, Միջին Ասիայում՝ 5,3, Կովկասում՝ 12,4, Սիբիրում՝ 12,3%[12]: Ցարական կառավարությունը, պետական բյուջեի առյուծի բաժինը հիմնականում օգտագործելով ռազմաոստիկանական և չինովնիկական ապարատի պահպանման համար, տեղական ժողովուրդների կրթական կարիքներին հատկացնում էր միայն չնչին գումարներ: 1894 թ. Անդրկովկասի և Դաղստանի ուսումնական շրջանում 13 հազ. շնչին ընկնում էր մեկ տարրական դպրոց[13]: Պատահական չէ, որ Կովկասում 1897 թ. 1000 բնակչին ընկնում էր 18,2 սովորող տղամարդ և 8 կին[14]: Սա ցարիզմի ազգային-գաղութային ճնշման բնորոշ փաստ է, երբ ծայրամասերում ավելի շատ, քան կենտրոնական նահանգներում ինքնակալությունը ժողովրդական մասսաներին զրկում էր կրթությունից:

Անդրկովկասի բնակչության գրագիտության անբավարար վիճակը չէր կարող բացասաբար չանդրադառնալ երկրամասում ձևավորվող պրոլետարիատի կրթական մակարդակի վրա: Բանվոր դասակարգի համալրման հիմնական աղբյուրները՝ գյուղացիությունը, արհեստավորները, բանվորների երեխաները, կրթության առումով հետին պլան էին մղված: 1897 թ. Անդրկովկասի բանվոր դասակարգի գրագիտության մակարդակը ցածր էր համառուսաստանյան պրոլետարիատի համեմատությամբ: Այսպես, օրինակ, եթե կայսրությունում այն կազմում էր 51,9%, ապա երկրամասում գրագետ էր բանվորների միայն 31,5%-ը[15]: Համեմատաբար կրթական բարձր մակարդակ ուներ Վրաստանի պրոլետարիատը: 1897 թ. բանվորների կրթական միջին ցուցանիշը կազմում էր 38%, ընդ որում մշակող արդյունաբերության բանվորներինը՝ 44, առևտրի ոլորտինը՝ 47, տրանսպորտինը՝ 34 և շինարարական բանվորներինը՝ 27: Ցածր էր լեռնարդյունաբերության բանվորների գրագիտությունը՝ 24%, բեռնակիրներինը՝ 15%[16]: 1897 թ. մարդահամարով Բաքվի պրոլետարիատի միջին գրագիտությունը կազմում էր 27,5%, իսկ Բաքվի նահանգի ողջ բանվորներինը՝ 26,5%[17]:

Կրթական գործն առավել անմխիթար վիճակում էր Արևելյան Հայաստանում: 1869 թ. Երևանի նահանգապետի հաշվետվության մեջ նշվում էր, որ 450000 բնակիչ ունեցող նահանգում կան ուսումնական 5 հաստատություն և յուրաքանչյուր հազար բնակչին ընկնում է

---

8 А. Г. Рашин, Формирование рабочего класса России, М., 1958, с. 584.

9 Նույն տեղում, էջ 584:

10 Рабочий класс России от зарождения..., с. 208.

11 Численность и состав рабочих..., т. 1, с. XIX. Տե՛ս նաև Э. Э. Крузе, Положение рабочего класса России в 1900—1914 гг., Л., 1976, с. 120.

12 ЦГИА СССР, ф. 32, оп. 1, д. 1126. с. 6.

13 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ ՄԼԻ ՀՄԿԱ), ֆ. 4033, ց. 32, գ. 5, թ. 26:

14 ЦГИА СССР, ф. 32, оп. 1, д. 1126, с. 2, 6.

15 Численность и состав рабочих..., т. II, СПб., 1906, табл. III, с. 80—85, 90—95, 96—99, 106—113, 124—131, 134—139. Տե՛ս նաև Формирование рабочего класса в Закавказье, Тбилиси, 1974, с. 55.

16 Э. В. Хоштария, Развитие промышленности и формирование рабочего класса в Грузии XIX в., (автореферат докт. дисс.), Тбилиси, 1969, с. 168.

17 И. В. Стригунов, Из истории формирования бакинского пролетариата 70—90-х гг., Баку, 1960, с. 152—153.

մեկ սովորող[18]։ Վիճակը չի փոխվում նաև 1874 թ.՝ ուսումնական 5 հաստատություններում սովորում էին ընդամենը 677 աշակերտ[19]։

70-ական թվականների կեսերից ցարիզմը, հայ դպրոցի, մտավորականների նկատմամբ ազգային խտրականության քաղաքականություն վարելով, փակում է տասնյակ մշակութային-կրթական ընկերություններ, նույնիսկ հայ երիտասարդներին արգելելով դպրոցներում դասավանդել[20]։ 1888 թ. Երևանի նահանգում հարկատու դասերի 126 բնակչից մեկն էր սովորող, այն դեպքում, երբ արտոնյալ դասերից՝ երեքից մեկը[21]։ Ավելի անմխիթար էր վիճակը կանանց կրթության հարցում. 1893 թ. նահանգի 1000 կանանց ընկնում էր 4,2 սովորող[22]։

90-ական թվականներին ավելանում է սովորողների քանակը, որոշ աշխուժություն է ապրում ժողովրդական կրթությունը, սակայն դպրոցը դեռևս հեռու էր ժողովրդի հիմնական զանգվածների կրթական պահանջը բավարարելուց։ 1897 թ. Երևանի նահանգի ողջ բնակչության գրագիտությունը կազմել է 6,4%, քաղաքայինը՝ 27,2, Կարսի մարզում՝ 10,8, Կարսում՝ 38,8։ Ցածր էր հատկապես նահանգի գյուղական բնակչության գրագիտությունը[23]։ Կարսի մարզի բնակչության կրթական համեմատաբար բարձր մակարդակը բացատրվում է եկվոր բնակչության, մասնավորապես ռուսների առկայությամբ, որոնք աչքի էին ընկնում բարձր գրագիտությամբ։ Նահանգի անդամ «հովանավորվող» ռուսական դպրոցները անմխիթար վիճակում էին։ Այսպես, օրինակ, Երևանի Ա. Ս. Պուշկինի անվան ռուսական դպրոցը 1903 թ. սուղ հնարավորությունների պատճառով սովորողների մի մասի առջև փակեց դռները[24]։ Այս իրողությունը մեկ անգամ ևս հիմնավորում է Վ. Ի. Լենինի այն կարծիքը, ըստ որի ինքնակալությունը Ռուսաստանում ժողովրդական կրթության մեծագույն թշնամին է, և երկրում չկա ժողովրդի լուսավորության ավելի անհաշտ թշնամի, քան Ռուսաստանի կառավարությունն է[25]։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայկական միջնակարգ դպրոցների սովորողների հիմնական մասը ծագում էր հասարակ ժողովրդից, իսկ պետական ու ազգային տարրական դպրոցների սովորողների 80—90%-ը երկրագործների, արհեստավորների, բանվորների և բնակչության ստորին խավերի երեխաներն էին[26], այսինքն՝ սոցիալական այն շերտերը, որոնք համալրում էին պրոլետարիատի շարքերը։ Բնականաբար, ինչքան ժողովրդական կրթության մակարդակը բարձր լիներ, այնքան այն կնպաստեր ձևավորվող բանվորների կրթական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը։ Իհարկե, այն կարծիքին չենք, որ բոլոր դպրոցների սովորողները հետագայում լրացնում են վարձու բանվորների շարքերը։ Բայց որ դրանց զգալի մասը ընդգրկվում են առևտրաարդյունաբերական, տրանսպորտի և սպասման ոլորտի աշխատանքներում, անկասկած է։ Մեր հաշվարկներով 1897 թ. Երևանի նահանգի նշված ոլորտներում կային 12-ից ցածր և մինչև 16 տարեկան 834 պատանիներ, որոնք կազմում էին ընդհանուր բանվորների 19,1%-ը, որոնցից գրագետ էին 229-ը կամ նրանց գրագիտության մակարդակը կազմում էր 27,4% (տե՛ս աղ. № 2)։

Հեղափոխության նախօրյակին և տարիներին ռուս բանվորների հետ հայ պրոլետարիատը ևս պայքարում է բանվորական, դեմոկրատական լավագույն դպրոցի համար։ Այդ մասին վկայում են արևելահայ բանվորության գործադուլային պայքարի բազմաթիվ փաստերը[27], որտեղ ձեռնարկատերերին ներկայացվում էին դպրոցներ, ընթերցասրահներ, գրադա-

[18] ЦГИА СССР, ф. 1268, оп. 16, д. 12, с. 319.

[19] Նույն տեղում, ց. 20, գ. 146, էջ 288։

[20] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 17, թ. 1—2։ Տե՛ս նաև Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 429։

[21] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 4033, ց. 5, գ. 17, թ. 103, 106։

[22] Նույն տեղում, գ. 19, թ. 12, 14—15։

[23] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXXI, СПб., 1905, с. I, XXI; Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г., т. LXIV, Карсская область, СПб., 1900, тетрадь 1, с. I.

[24] ՀՍՍՀ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ԿՊՊԱ), ֆ. 117, ց. 1, գ. 1275, թ. 7—8, 10—13։

[25] Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ., հ. 23, էջ 160—161։

[26] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 769։

[27] Ա. Ս. Համբարյան, Դ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի պատմություն, Երևան, 1988, էջ 191։

թոններ ստեղծելու պահանջներ։ Հակառակ ինքնակալությանը, Երկրամասի պրոլետարիատը բազմաթիվ ուղիներով ձեռք էր բերում ընդհանուր և մասնագիտական գիտելիքներ։ Այս առումով քիչ դեր չկատարեցին սոցիալ-դեմոկրատիան, բանվորական լեգալ և անլեգալ հրատարակությունները, բոլշևիկյան մամուլը և այլն։ Դեռևս 1903 թ. ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն ցարիզմի դեմ ուղղված կոչի մեջ պահանջում էր 300-ից ավել բանվոր ունեցող ձեռնարկություններում բանվորների երեխաների համար անվճար ուսումնարաններ հիմնել, իսկ բանվորների համար՝ ձրի ընթերցարան-գրադարաններ[28]։ 1905 թ. Վ. Ի. Լենինը համարել է Ռուսաստանի ժողովրդական մասսաների մեծ զարթոնքի տարի[29]։ Պրոլետարիատի քաղաքական ինքնագիտակցության բարձրացմանը և հեղափոխական պայքարին զուգընթաց որոշ տեղաշարժեր կատարվեցին բանվորների կրթության ուղղությամբ։ 1906 թ. Երևանի նահանգի առևտրաարդյունաբերական, սննդի և սպասարկման ոլորտներում աշխատող մինչև 17 տարեկան պատանիներին թույլատրվեց աշխատանքային օրերին (առավոտյան 8—11-ը, կամ 9—12-ը) դպրոց հաճախել։ Սակայն դա վերաբերում էր այն ձեռնարկություններին, որտեղ աշխատանքային օրը 8 ժամից քիչ էր տևում[30]։ 1906 թ. Ալավերդու բանվորների օգոստոսյան գործադուլի ժամանակ պահանջվում էր բացել գրադարան-ընթերցարան, իսկ գրքերը դուրս գրել բանվորների ցանկությամբ[31]։ 1907 թ. Ղափանի պղնձահանքերի բանվորները մարտյան գործադուլի ժամանակ պահանջում էին հայերի և ադրբեջանցիների համար բացել երեկոյան դասընթացներ[32]։

Բանվորների կրթությունից վախենում էր ոչ միայն ինքնակալությունը, այլև բուրժուազիան։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ նրանք բանվորներին վառոդ էին համարում, իսկ գիտությունը և կրթությունը՝ կայծ և մահու չափ վախենում էին գիտության ու բանվոր մարդկանց միանալուց[33]։

Ցածր աշխատավարձը բանվորներին թույլ չէր տալիս երեխաներին ուղարկել դպրոց։ Արխիվային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Երևանի նահանգում նյութական սուղ միջոցների պատճառով ուսումնական տարվա կեսից շատ երեխաների հանում էին դպրոցից[34]։

Չնայած այդ ամենին, ինչպես կայսրությունում, այնպես էլ Արևելյան Հայաստանում բանվոր դասակարգի կրթական մակարդակը համեմատաբար բարձր էր ընդհանուր բնակչության համեմատությամբ (աղ. № 1)։ Ինչպես աղյուսակից երևում է, արդյունաբերական բոլոր խմբերի բանվորների գրագիտության մակարդակը միանման չէր։ Նրանց գրագիտության տոկոսը, որպես կանոն, տատանվում էր մասնագիտական և արտադրության ճյուղերի բարդության հետ կապված։ Այսպես, համեմատաբար բարձր գրագիտությամբ աչքի էին ընկնում պոլիգրաֆիստները, փայտամշակման, մետաղամշակման, հագուստեղենի պատրաստման ոլորտի բանվորները։ Ցածր էր աղահանքերի (41 բանվորից մեկն էր գրագետ), սննդի, խճուղային հաղորդակցության, կաշվի, սանիտարահիգիենիկ, տեքստիլ արդյունաբերության բանվորների կրթական մակարդակը։ Հետաքրքիր է, որ այդ օրինաչափությունը արտահայտվում է նաև համառուսաստանյան բանվորների կրթական մակարդակում։ Ամբողջովին վերցրած Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի կրթական մակարդակը ցածր էր երկրի, այդ թվում նաև Անդրկովկասի բանվորների միջին կրթական մակարդակից։ Երևանի նահանգում այն կազմում էր 27,5%[35]։ Ինչ վերաբերում է ըստ տարիքի բանվորների գրագիտությանը, նշենք, որ բացի 12 և ցածր տարիք ունեցողներից, որոնց մեջ գրագետ բանվորները կազմում էին 16,8%, որքան երիտասարդ էին բանվորները, այնքան նրանց մեջ բարձր էր գրագետների տեսակարար կշիռը։ Գրագիտության բարձր ցուցանիշ ունեին 15—16 տարեկան (56,8%) և 17—19 տարեկան (45,7%) պատանիները։ Նկատենք նաև, որ թեև 12—15 տա-

---

28 ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1022, ց. 2, գ. 90. թ. 1—2։

29 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկ., հ. 23, էջ 152։

30 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2832, թ. 1—3, 49, 115։

31 ՄԼԻ հայկական մասնաճյուղի կուսարխիվ, ֆ. 1022, գ. 323, ց. 2, թ. 1։

32 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 402։

33 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկ., հ. 2, էջ 95, 97։

34 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 117, ց. 1, գ. 1361, էջ 18, 21, 24։

35 Численность и состав рабочих..., т. II, ч. III, с. 134—139.

րեկանների գրագիտությունը բավական բարձր էր, սակայն այն իրական պատկեր չէր արտահայտում։ Նրանց տեսակարար կշիռը բանվորների ընդհանուր թվում քիչ էր։ Այս առումով ուշագրավ է, որ 20—39 տարեկան բանվորները իրենց տեսակարար կշռով գերակշռում էին բանվորների ընդհանուր քանակակազմում և գրագետ բանվորների մեջ։ Նրանք կազմում էին նահանգի բանվորների 50,1%-ը և բոլոր գրագետ բանվորների 49,4%-ը։ Կարսի մարզում համապատասխանաբար 58 և 51,6% էին կազմում (աղ. № 2 և 3)։ Ցածր էր գրագիտությունը 40-անց բանվորների մոտ։ Չափազանց ցածր էր կանանց կրթական մակարդակը. Նահանգի տարբեր ոլորտներում ընդգրկված էին ընդամենը 83 կին, որոնցից միայն 7-ն էին գրագետ։ Ամբողջովին վերցրած գրագետ բանվորուհիները նահանգի ընդհանուր գրագետների թվում կազմել են 0,6%[36]։ Համեմատաբար բարձր էր Կարսի մարզի բանվորների կրթական մակարդակը։ Ըստ մեր հաշվարկների, 1897 թ. մարզի արդյունաբերության, տրանսպորտի և առևտրի ոլորտներում ընդգրկված 1058 բանվորներից գրագետ էին 366-ը կամ 34,6%-ը։ Որքան էլ զարմանալի է, նշված ոլորտներում ընդամենը 1 գրագետ կին կար[37]։

Այսպիսով, չնայած նշած բազմաբնույթ արգելքներին, Արևելյան Հայաստանում ևս ընդհանուր բնակչության համեմատությամբ պրոլետարիատը գրագիտության ավելի բարձր մակարդակ ուներ։ 1897 թ. Երևանի նահանգի արդյունաբերական բանվորների (արդյունաբերություն, տրանսպորտ, առևտուր) գրագիտությունը 4,3 անգամ բարձր էր ողջ բնակչության գրագիտությունից[38]։ Այս իրողությունը պայմանավորված էր կապիտալիզմի պահանջներով, համառուսաստանյան պրոլետարիատի հեղափոխական պայքարով, ինչպես նաև բանվորական լայն մասսաների ինքնակրթության ձգտմամբ։ Այս ամենը նպաստեց բանվոր դասակարգի ոչ միայն կրթական առաջընթացին, այլև ընդլայնեց նրա մտահորիզոնը, բարձրացրեց դասակարգային ինքնագիտակցությունը։ Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ, բանվորներն առանց գիտելիքների անպաշտպան էին, իսկ գիտելիքներով՝ ուժեղ են[39]։

Բանվորների գրագիտության աստիճանը ինչ-որ չափով պայմանավորում էր նրա որակական մակարդակը։ Այս առումով հետաքրքիր է, որ Ռուսաստանի արդյունաբերական խոշոր ձեռնարկություններում բանվորների գրագիտությունը և որակավորումը իրենց տեսակարար կշռով մոտավորապես միանման էին և կազմում էին 60—70%[40]։ Փաստերը վկայում են, որ Ռուսաստանում բանվորների մասնագիտական ունակությունների բարձրացմանը զգալիորեն նպաստում էին ձեռնարկություններին կից գործող տեխնիկական դպրոցները, ուսումնական արհեստանոցները, մասնագիտական դասընթացները, հանրակրթական, երեկոյան և կիրակնօրյա դպրոցները[41]։ Այդ դպրոցները և հաստատությունները ընդգրկում էին բանվորների և նրանց երեխաների միայն որոշ մասը։

1904—1905 ուստարում Ռուսական տեխնիկական ընկերության և ֆաբրիկագործարանային դպրոցներում սովորում էին ավելի քան 46 հազ. բանվորների երեխաներ[42]։ Դա չէր կարող չնպաստել բանվորների մասնագիտական որակավորման մակարդակի բարձրացմանը։ Ռուսաստանի ֆաբրիկագործարանային արդյունաբերության մեջ տարբեր որակավորում ունեցող բանվորները կազմում էին խոշոր ինդուստրիայի բանվորների ընդհանուր թվի մոտավորապես $^{2}/_{3}$-ը[43]։ Արդյունաբերության զարգացած ճյուղերում որակյալ բանվորների տեսակարար կշիռը ավելի բարձր էր։ Այսպես, մետաղամշակման, մեքենաշինական, էլեկտրատեխնիկական, խոշոր ձեռնարկություններում որակավորում ունեցող բանվորների բաժինը 80% և ավելի էր[44]։ Ռուսաստանում բանվորների մոտ 35%-ը միջին որակավորման աշխատավարձ

---

36 Նույն տեղում։

37 Նույն տեղում, էջ 96, 99։

38 Նույն տեղում, էջ 134—139։

39 Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկ., հ. 2, էջ 97։

40 Рабочий класс Центра страны и Сибири (конец XIX—нач. XX в.). Новосибирск, 1981, с. 47.

41 ЦГИА СССР, ф. 90, оп. 1, д. 537, л. 12, 14—15; Ленинградский государственный исторический архив, ф. 139, оп. 1, д. 7380, л. 2—5, об., ф. 2075, оп. 6. д. 20, л. 13—28, Центральный государственный архив г. Москвы, ф. 1587, оп. 1, д. 1, л. 1—8

42 Э. Э. К р у з е, Положение рабочего класса России в 1900—1914 гг., с. 122—123

43 Рабочий класс Центра страны и Сибири, с. 46—47.

44 Там же, с. 47.

էր ստանում։ Ցածր որակավորման և առանց որակավորման վատ վճարվող բանվորների բաժինը հասնում էր 60%-ի[45]։ Երկրի ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում որակյալ բանվորների քանակը բավականին ցածր էր, իսկ սևագործները հաճախ կազմում էին բանվորների ընդհանուր թվի 2/3-ը[46]։ Տարիքային առումով XX դ. սկզբին չափահաս բանվորների կեսից ավելին (56,9%) միջին որակավորում ունեին, իսկ 2%-ը՝ բարձր[47]։ Կայսրության ազգային շրջաններում բանվորների որակավորման ընդհանուր մակարդակը ցածր էր։ Մասնագիտական կրթության համապատասխան համակարգի բացակայությունը, արդյունաբերության զարգացման ցածր տեմպերը, բանվոր դասակարգի հիմնական կադրերի ձևավորման դանդաղ ընթացքը, արտադրության առանձին ճյուղերի սեզոնային բնույթը պայմանավորեցին ազգային շրջաններում վարձու բանվորների որակավորման ցածր մակարդակը։ Բանվորների մեջ բավական թիվ էին կազմում սևագործները, ժամանակավոր և օրավարձու աշխատողները։ Դա ևս խանգարում էր նրանց որակավորման աճին։ Նման վիճակ էր տիրում նաև Անդրկովկասում։ Բացի մի քանի արհեստագործական դպրոցներում սովորողներից Երկրամասի պրոլետարիատը իր որակավորումը ձեռք էր բերում հիմնականում աշխատանքի ընթացքում։ 1898 թ. Վրաստանում կար արհեստագործական 4 ուսումնարան, որոնցում սովորում էր 338 մարդ[48]։ Կովկասի 7,5 միլիոն բնակչությանը ընկնում էր միայն արհեստագործական 7 ուսումնարան (125 հազ. ռ. բյուջեով), որտեղ սովորում էր 550 տղա[49]։ Ավելի վատ էր գյուղատնտեսական կրթության վիճակը, որի վրա երկրամասում (4 միլիոնանոց բյուջեից) ծախսվում էր միայն 24 հազ. ռուբլի, իսկ սովորողների քանակը հասնում էր 74-ի[50]։ Ցարիզմը և ռուսական երիտասարդ բուրժուազիան ծայրահեղորեն դժվարացնում էին Երկրամասի բանվորների որակական աճը։ Սակայն արդյունաբերական նոր ճյուղերի զարգացումը, հայրենական և եվրոպական սարքավորումների ներդրումը պահանջում էին բանվորների տեխնիկաինժեներական անձնակազմի որակավորման համապատասխան բարձրացում։ Անդրկովկասում բարձր որակավորմամբ և աշխատանքային երկար ստաժով աչքի էին ընկնում Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցներում աշխատող բանվորները։ 1900 թ. այնտեղ և դեպոյում աշխատող 4000 բանվորներից 5 և ավելի տարվա ստաժ ունեին բանվորների 16,7%-ը, 10 և ավելի՝ 30%-ը[51]։ 1903 թ. Բաքվի բանվորների 50%-ը ուներ մեկից մինչև 5 տարվա ստաժ, իսկ 27,6%-ը՝ 5 տարուց ավելի[52]։ Ազգային առումով երկրամասի բանվորների կազմում բարձր որակավորում ունեին եվրոպացի բանվորները, ռուսները, վրացիները, հրեաները։ Բարձր որակավորմամբ աչքի էին ընկնում նաև հայերը։ Բազմաթիվ պատճառների հետ մեկտեղ (կրթական բարձր մակարդակը, բանվորների ստվար քանակակազմը) այս իրողությունը բացատրում ենք նաև նրանով, որ հայերը 2 անգամ ավելի, քան վրացիները և 5 անգամ ավելի, քան ադրբեջանցիները ընդգրկված էին Անդրկովկասի քաղաքային ինդուստրիալ արդյունաբերության տարբեր ճյուղերի աշխատանքներում[53]։

Երկրամասի բանվորների կազմում հայերը (որոնց զգալի մասը եկել էր Հայաստանից և հայաբնակ վայրերից) ռուսների, վրացիների հետ կազմում էին պրոլետարիատի հիմնական որակյալ կորիզը։ Այսպես, Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող ավելի քան 9 հազ. հայ բանվորների 20%-ը վարպետներ էին, 43%-ը՝ կադրային որակյալ բանվորներ, իսկ 16%-ը՝ սևագործներ[54]։ 1907 թ. Բաքվի 49 հազ. 948 բանվորների մեջ ռուս վարպետները կազմել են 57,7%, հայերը՝ 31%, ադրբեջանցիները՝ 9,5%[55]։ Հայերը բավական բարձր

45 Рабочий класс России 1907—февраль 1917, М., 1982, с. 74.
46 Рабочий класс Центра страны и Сибири, с. 47.
47 Рабочий класс России 1907—февраль 1917 г., с. 74
48 Кавказский календарь, 1900, III отдел, с. 66—67.
49 Отчет попечителя Кавказского учебного округа за 1889 г., с. 113.
50 Նույն տեղում։
51 А. И. Мествиришвили, Формирование тифлисского пролетариата 1880—1900 гг. (автореферат канд. дис.), Тбилиси, 1965, с. 12.
52 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 75։
53 А. Н. Мнацаканян, Ленин и решение национального вопроса в СССР, Ереван, 1970, с. 36—37.
54 Խ. Գ. Գուլանյան, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, էջ 26։
55 Ա. Ն. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 37։

որակավորում ունեին Թիֆլիսի, Բաթումի արդյունաբերական ձեռնարկություններում, երկրամասի երկաթուղային բանվորների կազմում և այլն։ Անդրկովկասի հայ բանվորների զգալի մասը բազմաթիվ թելերով կապված էր Արևելյան Հայաստանի հետ։ Նրանք զանազան պատճառներով (հոսունություն, հողի հետ կապը, գործադուլային շարժումներին մասնակցելու համար աշխատանքից զրկվելը) վերադառնալով հայրենիք, ընդգրկվում էին տարբեր ոլորտների աշխատանքներում։ Հետևաբար, համալրելով տեղական բանվորների շարքերը, նրանք որոշակիորեն նպաստում էին նաև որակական աճին։

Սակայն բուն Արևելյան Հայաստանում պրոլետարիատի ձևավորման առանձնահատկությունները նրան օժտեցին որակական ցածր հատկանիշներով։ Ցնայած դարի վերջին արդյունաբերական առանձին ճյուղերի զարգացման և համակենտրոնացման բավական բարձր մակարդակին, Անդրկովկասը, այդ թվում նաև Արևելյան Հայաստանը, ամբողջովին վերցրած մնում էին կայսրության ագրարային ծայրագավառներ։ Եթե 1897 թ. երկրի գյուղական բնակչությունը կազմում էր 77,2%, ապա Անդրկովկասում՝ 79,6%, Երևանի նահանգում՝ 87,4%[56], եթե Ռուսաստանում առևտրաարդյունաբերական բնակչությունը կազմում էր 17,9%, ապա Անդրկովկասում՝ 13,7%, Երևանի նահանգում՝ 7,8—8%[57]։ Փաստորեն, Արևելյան Հայաստանի պրոլետարիատի ձևավորման և համալրման հիմնական աղբյուրը գյուղացիությունն էր, իսկ կիսագրագետ գյուղը չէր կարող որակյալ կադրերով ապահովել բանվորներին։

Բանվոր դասակարգի որակական փոփոխությունները պայմանավորված էին նաև կապիտալիստական մեքենայական ինդուստրիայի զարգացմամբ։ Վ. Ի. Լենինը նշել է, որ խոշոր մեքենայական ինդուստրիայի փուլում շարունակ տեղի է ունենում բանվոր դասակարգի աճ, «որը կրթվում, միավորվում և կազմակերպվում է արտադրության հենց կապիտալիստական պրոցեսի մեխանիզմի շնորհիվ»[58]։ Այս առումով ավելորդ չէ նշել, որ Արևելյան Հայաստանում արդյունաբերական հեղաշրջումը բավական ուշ է սկսվել և նույնիսկ դրանից հետո էլ մեքենայական խոշոր ինդուստրիա չստացվեց։ Ե՛վ արդյունաբերական հեղաշրջման ուշացումը, և՛ կադրային որակյալ բանվորական ուժ պահանջող խոշոր ձեռնարկությունների բացակայությունը իրենց բացասական կնիքը դրեցին թե՛ պրոլետարիատի ձևավորման դանդաղ ընթացքի, թե՛ նրա որակական հատկանիշների վրա։ Ուսումնասիրությունները բերում են այն համոզման, որ Ռուսաստանում արդյունաբերական այն ոլորտները, որտեղ բանվորներն ունեին կրթական և որակական բարձր մակարդակ (օրինակ, մետաղագործները, մեքենաշինարարները, քիմիագործները, էլեկտրատեխնիկները, տեքստիլագործները և այլն) հիմնականում բացակայում էին Արևելյան Հայաստանում։ Իսկ արդյունաբերական այնպիսի ճյուղերում, որոնք կային և Ռուսաստանում, և Հայաստանում, բանվորների կրթական-որակական մակարդակների միջև էական մեծ տարբերություններ չկային։ Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ ծայրագավառներում հենց այդ ոլորտների (պղնձահանքային արդյունաբերության, աղի արդյունահանման, շինարարական, տեքստիլ, ծխախոտի, կաշվի, առևտրի) բանվորների կրթական-որակական մակարդակն էր ցածր[59]։

Ինչպես վերը բերված, այնպես էլ բազմաթիվ այլ պատճառներ (արդյունաբերության մեջ մանուֆակտուրային փուլի կարճատևությունը, կլոր տարին արտադրանք տվող առաջավոր տեխնիկայով զինված ձեռնարկությունների սակավությունը, աշխատուժի ավելի շատ կենտրոնացումը գյուղական վայրերում, բանվորների զգալի մասի կապերի պահպանումը գյուղի հետ, պրոլետարիատի քանակական աճի սահմանափակ հնարավորությունները և այլն) նվազ նպաստավոր պայմաններ էին ստեղծել բանվոր դասակարգի որակական աճի համար։ 1897 թ. մարդահամարի համաձայն Երևանի նահանգում արդյունաբերական (արդյունաբերող և մշակող) և շինարարական ոլորտում ընդգրկված աշխատուժի ընդհանուր մասսայի մեջ արդյունաբերական բանվորները կազմում էին 16%, այն դեպքում, երբ սևագործները և օրավարձու բանվորները կազմում էին 24,3%, գյուղատնտեսական բանվորները՝ 39,2%[60]։ 1897 թ. Երևանի նահանգում և Կարսի մարզում 10398 ժամանակավոր և օրավարձու բանվոր-

66 Մ. Հ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 273։

57 Նույն տեղում։ Տե՛ս նաև Վ. Ե. Խոջաբեկյան, Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը, Երևան, 1979, էջ 108։

58 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 1, էջ 203։

59 Այս մասին որոշակի պատկերացում է տալիս № 1 աղյուսակը։

60 М. Я. Кантерс. Из истории рабочего класса Грузии. Тбилиси, 1970, с. 12, 18.

ներ կային¹։ Դրա հետ մեկտեղ չի կարելի չնշել, որ անցյալ դարի 90-ական թվականներից նպաստավոր որոշ պայմաններ էին ստեղծվում առանձին ոլորտների բանվորների որակական աճի համար։

70—80-ական թվականներից սկսած բուրժուական ռեֆորմների հետևանքով նաև արևելահայ իրականության մեջ բացվեցին մասնագիտական-արհեստագործական դպրոցներ։ Մի շարք քաղաքներում՝ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Նախիջևանում և գավառներում բացվեցին մասնագիտական դպրոցներ, այնտեղ պատանիները ձեռք էին բերում հյուսնի, խառատի, դարբնի, փականագործի, հնագրիչի, մանածագործի և այլ մասնագիտությունների վերաբերյալ գիտելիքներ[62]։ Սրանց մի մասը, անշուշտ, համալրում էր վարձու բանվորների շարքերը և նպաստում նրանց որակավորման բարձրացմանը։ Սակայն դրանց քանակը շատ քիչ էր և եղածներն տարրական կրթության հետ միայն մասնագիտական անբավարար գիտելիքներ էին տալիս։ 1899 թ. Կարսի մարզում աշակերտները մասնագիտական գիտելիքներ էին ձեռք բերում։ Ուսուցումը գործնական բնույթի էր, որոշակի կապ կար արտադրության հետ[63]։ 1902 թ. Կարսի նահանգապետի հաշվետվության մեջ նշվում էր, որ նախատեսվում է պետության հաշվին բացել արհեստագործական տարրական դպրոց։ Այն բացվեց 1903 թ.[64]։ Երևանի նահանգի 16 դպրոցներին կից գործում էին գյուղատնտեսական-այգեգործական բաժիններ[65], սակայն ընդհանուր առմամբ գյուղատնտեսական կրթությունը անբավարար էր։ Դրա խոսուն վկայությունն այն է, որ նահանգում միայն մեկ մարդ ուներ գյուղատնտեսական կրթություն։ Նահանգի գավառները ունեին երկու հողաշինարար ինժեներ[66]։ Պատահական չէ, որ նահանգապետը առաջարկում էր երկրամասում բացել մետաքսագործների, գինեգործների, շերամապահների, այգեգործների և այլ մասնագիտական դպրոցներ[67]։

Մինչև 90-ական թվականների կեսը Արևելյան Հայաստանի վարձու բանվորների մեծ մասը սևագործներ էին։ Դա բացատրվում է նրանով, որ այդ շրջանում բացակայում էին որակյալ աշխատուժ պահանջող արդյունաբերական ճյուղերը։ Դեռ առաջին քայլերն էին կատարվում պղնձարդյունաբերության տեխնիկական վերակառուցման ուղղությամբ, չէր սկսվել երկաթուղային շինարարությունը։ Վարձու աշխատուժ պահանջող առանձին մանր ձեռնարկությունները բավարարվում էին անորակ աշխատուժով, սեզոնային ժամանակավոր վարձու բանվորներով, օրամշակներով և այլն։ 90-ական թվականներից սկսած արդյունաբերական հեղաշրջումը[68] բանվորական որակյալ աշխատուժի պահանջ էր ներկայացնում։ Թեև այդ շրջանում ես գերակշռում էին մանր ձեռնարկությունները, սակայն նրանց մի մասը սկսում էր վերակառուցվել։ Հանդես էին գալիս կապիտալիստական արդյունաբերության հիմքերի վրա դրված նոր գործարաններ։ Արևելյան Հայաստանում որակյալ կադրերի քանակի համեմատական աճ է նկատվում պղնձարդյունաբերության մեջ։ 1887 թ. Ախթալայի պղնձահանքերում բանվորների քանակը հասնում էր 350-ի։ Նրանցից 150-ը աշխատում էր գործարանում, իսկ 200՝ գործարանից դուրս։ Բանվորների աշխատավարձը տատանվում էր 40 կոպեկից մինչև 2 ռուբլու սահմաններում։ Գործարանում աշխատող բանվորներն ավելի որակյալ էին և առավել բարձր աշխատավարձ էին ստանում։ Նույն թվականին Ախթալայի 131 բանվորներից 78-ը հորատողներ էին, 12-ը՝ հետազոտողներ, 41-ը՝ վարպետներ։ Այստեղ աշխատում էին նաև իտալացիներ, որոնք հիմնականում մասնագետներ էին[69]։ Նույն ժամանակաշրջանում աշխատուժի որակական աճ է նկատվում նաև Ալավերդիում։ Գործարանում աշխատողների և

---

61 Գ. Ա. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—07 թթ., Երևան, 1956, էջ 13։

62 Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, էջ 768։ ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 3394, 1-ին մաս, թ. 7—8, 13։

63 ЦГИА СССР, ф. 733, оп. 205, д. 4818, с. 2—5.

64 Նույն տեղում, ֆ. 1282, ց. 3, գ. 545, էջ 37։

65 Циркуляр по управлению Кавказским учебным округом, № 4, апрель 1904 г., Тифлис, 1904, с. 740—741.

66 ЦГИА СССР, ф. 1282, оп. 3, д. 545, с. 18.

67 Նույն տեղում, էջ 26։

68 Ա. Ս. Համբարյան, Դ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 30—32։ Տե՛ս նաև Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 218—219։

69 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 3, թ. 3—7, 9։

ծառայողների զգալի մասն ուներ տեխնիկական հատուկ կրթություն, որ ստացել էր Ռուսաստանում և Գերմանիայում[70]։ Պղնձագործ բանվորների որակական մակարդակը ավելի է բարձրանում XX դարի սկզբին, երբ հիմնականում ավարտվում է Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերության տեխնիկական վերակառուցումը[71]։ Այստեղ սևագործ բանվորների կողքին աշխատում էին ձուլող վարպետներ, հորատողներ, պայթեցնողներ, ինժեներներ, փականագործներ, վագոնավարներ և այլն։ Պղնձագործ բանվորների շրջանում աստիճանաբար բարձրանում էր մասնագիտական որակավորումը։ Այսպես, միայն Ալավերդու, Շամլուղի և Մանեսի պղնձահանքերում 300 բանվոր աշխատում էին զանազան մասնագիտություններով, 150-ը արհեստավորներ էին, 30-ը՝ չարվադարներ, 150-ը՝ տեսակավորողներ, 16-ը՝ էլեկտրատեխնիկներ և այլն[72]։ Ինչպես երևում է, ցածր որակավորում ունեցող բանվորների թիվը համեմատաբար շատ է։ Բայց բերված փաստերը ցույց են տալիս, որ բանվորների ճնշող մեծամասնությունը ուներ այս կամ այն մասնագիտությունը։ Փաստորեն, նախորդ տասնամյակների համեմատությամբ, պղնձագործ բանվորները որակական զգալի առաջխաղացում են ապրել։ Բանվորների որակական մոտավոր աստիճանը կարելի է որոշել նաև աշխատավարձի չափերով։ Հայտնի է, որ տարբեր որակավորում ունեցող բանվորների աշխատանքի վարձատրությունը տարբեր է։ Եթե ընդունենք, որ Ալավերդում սևագործ բանվորների օրվա աշխատավարձը կազմում էր 40—50 կոպեկ, ապա մոտավոր հաշվարկներով Ալավերդու բանվորների 39,9%-ը ստանում էին օրական 40 կոպեկից մինչև մեկ ռուբլի աշխատավարձ. իսկ 51-ը՝ մեկ ռուբլուց մինչև մեկ ռուբլի 40 կոպեկ և բարձր աշխատավարձ[73]։ Փաստորեն, աշխատողների զգալի մասը միջին և բարձր որակավորում ունեցող բանվորներ էին։ Ինչ վերաբերում է Զանգեզուրի պղնձարդյունաբերության բանվորներին, նշենք, որ նրանք իրենց որակավորմամբ զիջում էին Ալավերդու բանվորներին։ Նրանց մասնագիտական և որակական մակարդակը, բարձր աշխատավարձ ստացող բանվորների քանակը համեմատաբար ցածր էին[74]։ Դա բացատրվում է նրանով, որ Ղափանի պղնձահանքերը արդյունաբերական կենտրոնից ավելի հեռու էին գտնվում, աշխատուժի զգալի մասը իր կապերը գյուղի հետ չէր խզել։ Որպեսզի ընդգծենք Ալավերդու և Ղափանի բանվորների կրթական-որակական մակարդակների տարբերությունը, բերենք հետևյալ փաստը։ Եթե Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորների մեջ գրագետները կազմել են 21,6%[75], ապա Ելիզավետպոլի նահանգի (Ղափանի, Գետաբեկի) պղնձահանքային բանվորների մեջ այն կազմել է 6,8%[76]։ Ամբողջովին վերցրած Հայաստանի պղնձարդյունաբերության բանվորների մեջ բարձր որակավորում ունեին ռուսները, հայերը, հույները, վրացիները։ Ասենք նաև, որ ի տարբերություն մյուս ազգությունների, ռուս բանվորները հայերի հետ մեկտեղ կազմեցին Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության, երկաթուղային բանվորների որակյալ կազմի հիմնական և կայուն մասը[77]։

Արևելյան Հայաստանում իրենց որակավորմամբ աչքի էին ընկնում նաև երկաթուղային բանվորները։ Հայաստանում երկաթուղային շինարարությունը սկսվեց ավելի ուշ՝ 1895 թվականին[78]։ 1896—1908 թթ. արդեն կառուցվել էին Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս, Ալեքսանդրապոլ—Երևան, Ուլուխանլու—Ջուլֆա գծերը[79]։ Երկաթուղային շինարարության ծավալմանը զուգընթաց կառուցվում են արհեստանոցներ, կայարաններ, դեպոներ, որտեղ իրենց

---

70 Նույն տեղում, թ. 12ա։

71 Ա. Ս. Համբարյան, Դ. Ա. Մուրադյան, Ա. Հ. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 53—54։ Տե՛ս նաև Ա. Ս. Համբարյան, Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների համառոտ պատմություն, Երևան, 1983, էջ 78—79։ Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 218։

72 «Կայծ», 17. VII. 1906։

73 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 196, թ. 34—63։ Տե՛ս նաև Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 293։

74 Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 292։ Վ. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 60։

75 Численность и состав рабочих..., т. II, табл. III, с. 124.

76 Նույն տեղում, էջ 90—91։

77 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 4, թ. 88, գ. 14, թ. 146, 156, 160, 413, 506, ֆ. 271, ց. 1, գ. 19, թ. 358—360; Ա. Ս. Համբարյան, նշվ. աշխ., էջ 155—156։

78 ЦГИА СССР, ф. 1263, оп. 4, д. 169, с. 22.

79 Նույն տեղում, ֆ. 32, ց. 1, գ. 639, էջ 3։

մասնագիտական ունակությունները են ձեռք բերում տեղական բանվորները։ Շինարարության մեջ մեծ էր ոչ միայն շոդեքարշերի, վագոնների, շենքերի, շինանյութի, այլև վարձու աշխատուժի և ինժեներատեխնիկական անձնակազմի պահանջը։ Արևելյան Հայաստանում երկաթուղային շինարարության աշխատուժը համալրվում էր տեղաբնակ գյուղացիներից, Ռուսաստանի և Անդրկովկասի տարբեր շրջաններից եկած սևագործ բանվորներից։ Առանձին մասնագիտություններ պահանջող աշխատանքները կատարում էին իտալացիները, հույները, ռուսները, հայերը։ Արխիվային փաստերը ցույց են տալիս, որ շինարարության առանձին հատվածներում աշխատանքները դանդաղում են որակյալ մասնագետների (տեխնիկների, ինժեներների, վագոնավարների, գծագրողների) պակասության պայմաններում[80]։ Այդ բացը լրացվում էր շինարարական տարբեր տեղամասերից որակյալ մասնագետների տեղափոխմամբ, ինչպես նաև Ռուսաստանի զանազան կենտրոններից մասնագետների հրավիրմամբ։ Ուշագրավ է, որ Ռուսաստանի ուսումնական տարբեր հաստատություններում սովորող ուսանողները (հիմնականում հայեր և ռուսներ) գործուղվում էին որպես պրակտիկանտներ, ինժեներներ, տեխնիկներ, ավագ բանվորներ, բրիգադավարներ և այլն[81]։ Քիչ չեն դեպքերը, երբ երիտասարդ բանվորներն իրենց մասնագիտությունն ստանում էին երկաթուղու տարբեր հատվածներում, առավել փորձված մասնագետների մոտ[82]։ Նման ուղիով աստիճանաբար ստեղծվում էր որոշակի մասնագիտությունների երկաթուղային բանվորների մի սերունդ, որը դարձավ Ղարաքիլիսայի, Սանահնի, Երևանի, Ալեքսանդրապոլի, Կարսի երկաթուղային կայարանների և դեպոների բանվոր-ծառայողների որակյալ շերտ։ 1903 թ. երկրամասի երկաթուղային գծերի օժանդակ փոխօգնության դրամարկղների 10683 մասնակից երկաթուղային բանվոր-ծառայողների կեսից ավելին մեկից 5 տարվա ստաժ ունեին, իսկ 1855-ը (17,4%-ը)՝ 5—10 տարվա, 1317-ը (12,3%-ը)՝ 10—15 տարվա, 672-ը (6,3%-ը)՝ 15—20 տարվա, 155-ը (1,5%-ը)՝ 20—25 տարվա ստաժ[83]։ Բերված փաստերը ակնառու են դարձնում երկաթուղային բանվորների ճնշող մեծամասնության երկարատև արտադրական գործունեությունը։ Վերոհիշյալ բանվորներից 6641-ը կամ 62,2%-ը ամուսնացած, ընտանիքավոր բանվորներ էին[84]։ Այս ցուցանիշները կարելի է մասնակիորեն տարածել նաև Արևելյան Հայաստանի երկաթուղային բանվոր-ծառայողների վրա։

Կադրային բանվորների ոչ մեծ տեսակարար կշիռը բնութագրական էր նաև քաղաքային պրոլետարիատին։ Արևելյան Հայաստանում քաղաքային խոշոր ձեռնարկությունների բացակայությունը իր կնիքն էր դնում որակյալ բանվորների աճի վրա։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 1890 թ. Երևանի բազմաթիվ ձեռնարկություններում բանվորների ճնշող մեծամասնությունը զուրկ էր տեխնիկական կրթությունից[85]։ Նույնիսկ 1902—1903 թթ. Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Իգդիրի հարյուրավոր ձեռնարկություններ ունեին 4—8 բանվորներ, արտադրությունը սեզոնային բնույթ էր կրում, որի պատճառով նրանց քանակակազմը հաստատուն չէր։ Վերոհիշյալ ձեռնարկություններում կապիտալ ներդրումների քչության, արտադրության հիմնական պրոցեսների թույլ մեքենայացման, աշխատուժի հոսքի պատճառով բանվորների կազմը մշտապես փոփոխվում, իսկ հաճախ նաև կրճատվում էր[86]։ Բնական է, նման վիճակը դանդաղեցնում, հաճախ նաև արգելակում էր սոցիալական միատարր և հիմնական աշխատուժի ձևավորումը։

Բանվորների քանակով և քիչ թե շատ կայուն աշխատուժի առկայությամբ աչքի էին ընկնում Երևանի սպիրտ-կոնյակի, կաշվի, Ալեքսանդրապոլի գարեջրի, Նախիջևանի և Օրդուբադի մետաքսագործական ու Նահանգի տարբեր գավառներում եղած մի շարք ձեռնարկությունները[87]։

---

80 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 271, ց. 1, գ. 17, թ. 54, 87, 94, 100. ֆ. 270, ց. 1, դ. 4, թ. 158, գ. 14, թ. 146, 156, 160, 226, 258։

81 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 270, ց. 1, գ. 14, թ. 71—72; ֆ. 271, ց. 1, գ. 17, թ. 54,60,73։

82 Նույն տեղում, ֆ. 270, ց. 1, գ. 14, թ. 156։

83 Статистика служащих на железных дорогах участников пенсионных и сберегательно-вспомогательных касс на 1903 г., СПб., 1905, с. 52—53 (табл. № 19).

84 Նույն տեղում, էջ 65։

85 ЦГИА СССР, ф. 20, оп. 12, д. 245, л. 1—5.

86 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 1, գ. 2664, թ. 16—29, 31—37, 133—134, 141—158։

87 Նույն տեղում, թ. 31—37, 62—63, 67—69։

XIX դ. վերջերին—XX դ. սկզբներին, քաղաքային կյանքի աշխուժացմանը զուգընթաց, աշխատուժի համակենտրոնացման և տեխնիկական վերակառուցման որոշ տեղաշարժեր են կատարվում քաղաքային արդյունաբերության ոլորտում (նկատի ունենք փայտամշակման, մետաղամշակման, պոլիգրաֆիական, սննդի, տեքստիլ ձեռնարկությունները)։ Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում տարիների ընթացքում ձևավորվում է արտադրական որոշ փորձ ունեցող բանվորների, ճիշտ է, քիչ, բայց համեմատաբար կայուն շերտ։

Աղյուսակ № 1

Երևանի նահանգի բանվորների կրթական մակարդակը 1897 թ. ըստ ոլորտների (արդյունաբերություն, տրանսպորտ և առևտուր)*

| Զբաղվածության ոլորտները | Բանվորների ընդհանուր թիվը | ընդ որում ըստ սեռի: տղամարդ, թիվը | տղամարդ, այդ թվ. գրագետ | կին, թիվը | կին, այդ թվ. գրագետ | Գրագետների ընդ. թիվը երկու սեռի համար | Գրագետ. բանվ. տոկոսը Երևանի նահ. (%-ներով) | Գրագետ. բանվ. տոկոսը Թիֆլիսի նահ. (%-ներով) | Գրագետ. բանվ. տոկոսը Ռուսաստանում (%-ներով) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| փայտամշակման | 155 | 153 | 72 | 2 | 2 | 74 | 47,7 | 48,6 | 58,8 |
| մետաղամշակություն | 409 | 409 | 102 | — | — | 102 | 24.9 | 51,8 | 63,1 |
| ընդ որում փականագործ. մեխ. | 324 | 324 | 83 | — | — | 83 | 25,6 | 52,6 | — |
| սննդարդյունաբերություն | 310 | 295 | 51 | 15 | — | 51 | 16,4 | 32.2 | 49,7 |
| պոլիգրաֆիական | 38 | 38 | 35 | — | — | 35 | 92,1 | 82,8 | 82,3 |
| շինարարական բանվորներ | 1199 | 1198 | 374 | 1 | 1 | 375 | 31,3 | 27,4 | 50,0 |
| տեքստիլ արդյունաբերութ. | 165 | 148 | 39 | 17 | 1 | 40 | 24,2 | 23,6 | 40,0 |
| կաշվի | 96 | 96 | 20 | — | — | 20 | 20,8 | 34,9 | 47,1 |
| հագուստեղենի | 752 | 748 | 286 | 4 | 2 | 288 | 38,3 | 45,1 | 57,2 |
| առևտրի | 232 | 231 | 65 | 1 | — | 65 | 28,0 | 39.8 | — |
| երկաթուղային բանվորներ | 33 | 33 | 11 | — | — | 11 | 33,3 | 41,1 | 60,0 |
| հաղորդակցութ. այլ ոլորտ. | 620 | 617 | 48 | 3 | — | 48 | 7,7 | 15,2 | 35 |
| հյուրանոց. ակումբ. ճաշ. աշխ. | 49 | 48 | 15 | 1 | — | 15 | 30,6 | 53,8 | — |
| սանիտարա-հիգ. ոլորտ. բանվ. | 114 | 77 | 16 | 37 | 1 | 17 | 10,4 | 25,0 | |
| այլ ոլորտն. աշխատող բանվ. | 202 | 200 | 63 | 2 | — | 63 | 31,2 | 36,3 | — |
| ը ն դ ա մ ե ն ը | 43741** | 4291 | 1197 | 83 | 7 | 1204 | 27,5 | 36,3 | 50,9 |

Ամբողջովին վերցրած, ընդունելով Արևելյան Հայաստանի քաղաքային բանվորության կրթական-որակական մակարդակի ցածրությունը, չենք կարող չնկատել, որ ընդհանուր աշխատուժից աստիճանաբար առանձնանում էր արտադրական հմտություններ, որակյալ աշխատուժի փորձ ու աշխատանքային երկար ստաժ ունեցող արդյունաբերական հիմնական բանվորական սերունդը։ 1897 թ. Երևանի նահանգում արդյունաբերական բանվորները իրենց քանակով կազմում են այդ բնագավառները սպասարկող սևագործ և օրավարձու բանվորների 48,5%-ը, ընդ որում, այդ թիվը Վրաստանում կազմել է 43,6, իսկ Ադրբեջանում՝ 58,5%[88]։

[88] М. Я. Кантере, նշվ. աշխ., էջ 13։

* Աղյուսակը կազմելիս օգտագործել ենք հետևյալ նյութերը. Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи 1897 г. , т. 2, СПб., 1906, табл. III, с. 124, 131, 134—139; Э. Э. Крузе, նշվ. աշխ., էջ 20, М. Я. Кантере, նշվ. աշխ., էջ 55։

** Նշված մեկ բանվորի վերաբերյալ տեղեկություն չկա։

Այսպիսով, կապիտալիզմի դանդաղ զարգացման, արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների բացակայության պատճառով Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգի կրթական-որակական աճը բավական դանդաղ էր ընթանում։ Գաղութային իշխանությունները, ռուսական բուրժուազիան, մեծ եկամուտներ ստանալու համար հաճախ խրախուսում էին էժան, անորակ աշխատուժը և ելնելով իրենց դասակարգային շահերից, խավարի ու տգիտության էին դատապարտել բանվորներին։ Հայաստանում դեռահասները և բանվորները հնարավորություն չունեին մասնագիտական կրթություն ստանալու և բարձրացնելու իրենց որակավորումը։ Փաստորեն, ի հաշիվ տարրական դպրոցների և մասնագիտական ուսումնարանների սովորողների, բանվորները քիչ թե շատ համալրվում էին որակյալ աշխատուժով։ Բանվորների մի մասը իր մասնագիտական և տեխնիկական ունակությունները ձեռք էր բերում աշխատանքի պրոցեսում։

Աղյուսակ № 2

Երևանի նահանգի բանվորների (արդյունաբերություն, առևտուր, տրանսպորտ) կրթական մակարդակը ըստ տարիքի և սեռի (1897 թ.)*

| Բանվոր. տարիքը | Բանվորների թիվը | Տվյալ խմբի բանվոր. տես. կշիռը բանվորն. ընդհ. թվում (%-ով) | Գրագետների թիվը բանվորների ընդ. կազմում | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Թիվը | Գրագետ. տես. կշիռը տվյալ տարիքի խմբի բանվոր. մեջ | Տվյալ տարիքի խմբ. գրագետ բանվոր. տես. կշ. բոլոր գրագ. բանվ. մեջ | ընդ որում ըստ սեռի | | | |
| | | | | | | տղամարդիկ | | կանայք | |
| | | | | | | Թիվը | % | Թիվը | % |
| 12 և ցածր տարիքի | 161 | 3,7 | 27 | 16,8 | 2,2 | 27 | 2,3 | — | — |
| 13—14 տարիքի | 263 | 6,0 | 74 | 28,1 | 6,2 | 71 | 5,9 | 3 | 42,8 |
| 15—16 | 410 | 9,4 | 128 | 31,2 | 10,6 | 127 | 10,6 | 1 | 14,3 |
| 17—19 | 610 | 13,9 | 212 | 34,7 | 17,6 | 210 | 17,5 | 2 | 28,6 |
| 20—39 | 2193 | 50,1 | 595 | 27,1 | 49,4 | 595 | 49,7 | — | — |
| 40—59 | 646 | 14,8 | 154 | 23,8 | 12,8 | 153 | 12,8 | 1 | 14,3 |
| 60 և ավելի | 91 | 2,1 | 14 | 15,4 | 1,2 | 14 | 1,2 | — | — |
| ընդամենը | 4374** | 100 | 1204 | 27,5 | 100 | 1197 | 100 | 7 | 100 |

90-ական թվականներից սկսած արդյունաբերական հեղաշրջումը որոշ չափով նպաստեց համեմատաբար որակյալ աշխատուժ պահանջող արդյունաբերական նոր ճյուղերի հանդես գալուն։ Պղնձարդյունաբերության, քաղաքային ֆաբրիկագործարանային ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցումները և երկաթուղային ինտենսիվ շինարարությունը չէին կարող չնպաստել ձևավորվող պրոլետարիատի կրթական-որակական մակարդակի բարձրացմանը։ Կապիտալիզմի զարգացմանը զուգընթաց աստիճանաբար հանդես է գալիս իր կշռույթով ոչ մեծ արդյունաբերական հիմնական որակյալ կադրային բանվորությունը։

Արևելահայ պրոլետարիատի ընդհանուր կուլտուրական-քաղաքական ինքնագիտակցության աճը ընթանում էր համառուսական և տեղական գործոնների, մասնավորապես բանվոր դասակարգի հեղափոխական պայքարի բովում։ XX դ. սկզբներին Արևելյան Հայաստանի բանվոր դասակարգը իր սոցիալական հատկանիշներով, դասակարգային ու քաղաքական հասունությամբ անցյալ դարի 70—80-ական թվականների վարձու աշխատուժից տարբերվում էր ձևավորված դասակարգին հատուկ հատկանիշներով։ Այլ կերպ չէր էլ կարող լինել. կապիտալիզմի և բանվոր դասակարգի զարգացմանը զուգընթաց պրոլետարիատի կրթական-որա-

* Աղյուսակը կազմել ենք Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи 1897 г. ուսումնասիրության 2-րդ հատորի 134—139 էջերում տեղադրված III աղյուսակի տվյալների օգտագործմամբ։

** Նշված մեկ բանվորի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա։

կական աճը օբյեկտիվ պրոցես է, որը նրա ձևավորման գլխավոր պայմաններից է ու չափանիշներից։

Աղյուսակ № 3.

Բանվորների կրթական մակարդակը Կարսի մարզում (1897 թ.)*

| Բանվորն. տարիքը | Բանվորն. քանակը | Տվյալ խմբի բանվոր-ների տեսակ. կշիռը ընդ. բանվոր. թվում | Գրագետների թիվը բանվորների ընդհ. քանակակազմում: Թիվը | գրագետ. տեսա-կար. կշիռ. տվյ. տարիք. խմբի բանվորների մեջ | տվյալ տարիք. խմբի գրագետ բանվ. տես. կշ. ընդ. բանվ. մեջ |
|---|---|---|---|---|---|
| 12 և ցածր տարիքի | 18 | 1,7 | 8 | 44,4 | 2,2 |
| 13—14 | 33 | 3,1 | 17 | 51,5 | 4,6 |
| 15—16 | 80 | 7,6 | 45 | 56,2 | 12,3 |
| 17—19 | 110 | 13,2 | 65 | 45,7 | 17,5 |
| 20—39 | 614 | 58,0 | 189 | 30,8 | 51,6 |
| 40—59 | 149 | 14,1 | 38 | 25,5 | 10,4 |
| 60 և ավելի | 24 | 2,3 | 5 | 20,8 | 1,4 |
| ընդամենը | 1058 | 100,0 | 366 | 34,6 | 100,0 |

# РОСТ КАЧЕСТВЕННО-ОБРАЗОВАТЕЛЬНОГО УРОВНЯ РАБОЧЕГО КЛАССА В ВОСТОЧНОЙ АРМЕНИИ ВО ВСЕРОССИЙСКОЙ ПРОЛЕТАРСКОЙ СИСТЕМЕ
## (вторая половина XIX—начало XX вв.)

С. С. АКОПЯН

## Резюме

Рабочий класс Восточной Армении, являясь частью всероссийского пролетариата, нес на себе те основные черты культурно-качественного роста, которые были свойственны пролетариату страны в целом.

В силу слабого развития капитализма, национальной колониальной политики самодержавия, поощрения дешевой и некачественной рабочей силы со стороны русской буржуазии и, наконец, неудовлетворительной постановки народного образования образовательно-качественный уровень восточноармянского пролетариата был ниже среднего образовательного уровня всероссийского пролетариата.

Постепенно формируясь, в конце XIX в. пролетариат края стремился к образованию, в процессе производства приобретал специальные и технические навыки. Несмотря на многообразие барьеров как в России, так и в Восточной Армении уровень грамотности пролетариата был намного выше уровня общего населения.

В начале XX века появляется основной кадровый рабочий класс. Образование и классовое самосознание развивались при наличии всероссийских факторов в условиях революционной борьбы пролетариата.

---

* Աղյուսակը կազմել ենք Численность и состав рабочих в России на основании данных Первой всеобщей переписи населения Российской империи 1897 г., 2-րդ հատորի 96—99 էջերում տեղադրված III աղյուսակի տվյալների օգտագործմամբ։